

### 5.6. 77 տարածքի 2003թ. ապրիլի հիդրոդերևութաբանական պայմանների բնութագիրը

Ըստ 77 բնապահպանության նախարարության տեղեկատվության, 2003թ. ապրիլին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածքի գերակշռող մասում ցածր է եղել նորմայից  $1-2^{\circ}\text{C}$  (Իջևանում  $3^{\circ}\text{C}$ , Քաջարանում  $4^{\circ}\text{C}$ ): Լեռնային շրջաններում այն տատանվել է  $+3$   $+5^{\circ}\text{C}$ , (Աշոցքում  $+1^{\circ}\text{C}$ ), նախալեռներում  $+4$   $+7^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում  $+10$   $+13^{\circ}\text{C}$  սահմաններում:

Ապրիլի 1-2-ը, 17-20-ը և 27-30-ը օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից  $4-9^{\circ}\text{C}$ : Ապրիլի 1-ին լեռնային շրջաններում նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է  $-11$   $-16^{\circ}\text{C}$  (Մասրիկում  $-21^{\circ}\text{C}$ , Աշոցքում  $-30^{\circ}\text{C}$ ), նախալեռներում  $-5$   $-9^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում, Սյունիքի, Տավուշի հովիտներում  $-1$   $-6^{\circ}\text{C}$ :

Ապրիլի 4-9-ը և 25-26-ը օրական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից  $3-7^{\circ}\text{C}$ , հովտային շրջաններում  $10-11^{\circ}\text{C}$ : Այդ օրերին առավելագույն ջերմաստիճանը հասել է Սյունիքի հովիտներում  $+25$   $+29^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում  $+23$   $+26^{\circ}\text{C}$ , նախալեռնային շրջաններում  $+20$   $+24^{\circ}\text{C}$ , Լոռիում  $+16$   $+19^{\circ}\text{C}$  և լեռնային շրջաններում  $+12$   $+16^{\circ}\text{C}$ :

Ապրիլին միայն 6 օր տեղումներ չեն դիտվել, ամսական տեղումների քանակը Վայոց ձորում կազմել է նորմայի 170%-ը, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքում  $128-160\%$ -ը, Տավուշում, Արարատյան դաշտում  $120-130\%$ -ը (Արմավիրում  $150\%$ -ը, Արարատում  $77\%$ -ը), Սյունիքում այն նորմայի սահմաններում էր:

Ապրիլի 3-ին, 5-7-ը, 24-26-ը ուժեղ քամի է գրանցվել Գեղարքունիքում, Ջերմուկում, Արարատյան դաշտում, Կապանում և Վանաձորում: Քամու առավելագույն արագությունը հասել է 14-19 մ/վրկ, պոռթկումները՝ 20-25 մ/վրկ (Մարտունիում՝ 29 մ/վրկ): Ապրիլի 24-ին Տաշիրում, 26-ին՝ Վայոց ձորում դիտվել է կարկուտ:

Լոռիում, Սյունիքում ձնածածկը վերացել է ապրիլի 5-ին (ապրիլի 17-ին, այնուհետև 28-ին նորից առաջացել է ժամանակավոր ձյան ծածկ), Շիրակում, Կոտայքում, Գեղարքունիքում և Ջերմուկում այն վերացել է երրորդ տասնօրյակի սկզբին:

Ապրիլի 30-ի դրությամբ ձյան ծածկը պահպանվել է 2000 մ-ից բարձր մակերևույթների վրա:

Ապրիլին հանրապետության գետերի մեծ մասում ջրի միջին ամսական ելքերը կազմել են նորմայի մոտավորապես 150-180%-ը: Ընդ որում, ապրիլի 5-13-ն օդի ջերմաստիճանի կտրուկ բարձրացման, ապա հորդառատ անձրևների հետևանքով գետերում ջրի ելքերը կտրուկ մեծացել են՝ վնասներ հասցնելով մի շարք մերձափնյա բնակավայրերի ու ցանքատարածությունների:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում բարձրացել է 22 սմ-ով և 2003թ. ապրիլի 30-ի դրությամբ կազմել 1897.11 մ, որն 2002թ. նույն օրվա համեմատությամբ բարձր է եղել 55 սմ-ով: